«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Ուսումնական հաստատություն՝ «Կոտայքի մարզի Չարենցավանի ԱՀԿ Վազգեն Ա-ի անվան №3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Ստեփանյան Արմենուհի

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3-5

ԳԼՈՒԽ 1. Կրտսեր դպրոցականների տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները----------6-9

1.1.Կրտսեր դպրոցականների զարգացման և դաստիարակության առանձնահատկությունները----------6-8

1.2.Վեց տարեկանների տարիքային ճգնաժամն ու դրա հաշվառումը նրանց կրթադաստիարակչական գործընթացում---------- 8-9

ԳԼՈՒԽ 2.Վեց տարեկանների պատրաստվածությունը, հմտություններն ու կարողունակությունները----------10-13

2.1. Վեց տարեկանների պատրաստվածությունը---------- 10-11

2.2. Վեց տարեկանների հաղորդակցման հմտությունների ձևավորումը---------- 11-12

2.3. Խաղը և վեց տարեկանների իմացական կարողունակությունները---------- 12-13

ԳԼՈՒԽ 3. Ուսումնական գործունեությանը երեխաների պատրաստվածության մակարդակի բացահայտում /հետազոտական մաս/---------- 14-15

ԳԼՈՒԽ 4. Վեց տարեկանների ուսումնական գործունեության կազմակերպման հիմնախնդիրները----------16-20

4.1.Գրաճանաչության կազմակերպման գործընթացին ներկայացվող մանկավարժական պահանջները----------16-17

4.2. Գրաճանաչության նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները և իրականացման ուղիները---------- 17-20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------21-22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վաղ տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության խնդիրները մշտապես եղել են հոգեբանների և մանկավարժների ուշադրության կենտրոնում: Այս տարիքում է տեղի ունենում մարդու հոգեֆիզիոլոգիական բոլոր գործընթացների բուռն զարգացումը, ձևավորվում են սոցիալական վարքի առաջին դրսևորումները, ձեռք են բերվում անձնային հատկություններ, որոնք ենթակա են զարգացման հետագա տարիքային փուլերում:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Կյանքի, գիտության, տեխնիկայի ու մշակույթի հարաճուն զարգացմանը զուգընթաց դպրոցն էլ է անընդհատ զարգանում ու կատարելագործվում՝ հնարավորին չափ համահունչ դառնալով կյանքի հետ: Ուսուցման պրոցեսի կազմակերպման նորացման ու արդիականացման հարցը այժմ մանկավարժական գիտության առջև ծառացած անհետաձգելի խնդիրներից մեկն է:

Երեխաների դպրոցի նախապատրաստումը նոր խնդիր չէ, սակայն դրա արդիականությունը տարեցտարի չի նվազում: Վերջին տարիներին էապես խորացվել և ընդարձակվել են հաղորդվող գիտելիքների տեսական կողմերը: Վերջինս էլ թելադրում է նախադպրոցական կրթության ռազմավարության վերանայում:

Այսօր երեխաները դպրոց են գնում վեց տարեկանից և իր սոցիալական անկայունության, նոր պայմաններին և հարաբերություններին հարմարվելու դժվարությունների պատճառով այս տարիքի երեխան կարիք ունի անմիջական հուզական կոնտակտի, բայց դպրոցական ուսուցման ֆորմալիզացված պայմաններում այդ պահանջմունքը չի բավարարում:

Առաջադրվող հարցեր՝

1. *Որքանո՞վ է պատրաստ վեց տարեկան երեխան ներառվել ուսումնական գործընթացում:*
2. *Ի՞նչ բաղադրիչներ են անհրաժեշտ դպրոց հաճախող նոր աշակերտին զարգացվածության բավարար մակարդակ ունենալու համար:*
3. *Ի՞նչ է հոգեբանական և ֆիզիկական պատրաստվածությունը դպրոցին:*

Այս և նմանատիպ մի շարք հարցերի պատասխանները ներկայացված են ներքոնշյալ աշխատանքում:

Հետազոտության օբյեկտը վեց տարեկան երեխայի հոգեֆիզիոլոգիական վիճակն է և կատարման գործընթացը:

Հետազոտության առարկան վեց տարեկան երեխայի պատրաստվածության մակարդակի բացահայտումն է, նրա կրթական, դաստիարակչական և զարգացնող հնարավորությունների գիտատեսական սահմանումը:

Ուսումնասիրության և հետազոտության տարբեր փուլերում կիրառել ենք հետևյալ **մեթոդները.**

- ✓ մասնագիտական գրականության և տարրական դպրոցի կրթական փաստաթղթերի ուսումնասիրում,
- ✓ դասերի դիտարկում և վերլուծություն, առաջադրանքների պլանավորում, իրականացում և արդյունքների վերլուծություն,
- ✓ հարցախույզի իրականացում ծնողների, ուսուցիչների և աշակերտների շրջանում,
- ✓ արդյունքների քանակական և որակական վերլուծություն,
- ✓ մեր կողմից մշակված մեթոդական ցուցումների հիման վրա գրաճանաչության դասերի վարում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- ➢ ուսումնասիրել վեց տարեկանի հոգեբանական առանձնահատկություններն ու նրա հնարավորությունները,
- ➢ ներկայացնել կրտսեր դպրոցականի հուզական և կամային հիմնական բնութագրիչները,
- ➢ զարգացնել աշակերտների տեսողական, լսողական ուշադրությունը, հիշողությունը՝ տրված խաղերի, առաջադրանքների միջոցով,
- ➢ ներկայացնել նախադպրոցականից դպրոցականի անցման յուրահատկությունները,
- ➢ զարգացնել խմբով աշխատելու կարողունակությունը՝ գնահատելով ընկերոջ կատարած գործունեությունը,
- ➢ հետազոտել վեց տարեկանների իմացական և հոգեբանական պատրաստվածության մակարդակը:

- մշակել մեթոդական ցուցումներ և քայլարշավ, որոնք կնպաստեն նախաայբբենական շրջանի աշխատանքները կարդալու կարողության ձևավորմանը ծառայեցնելուն:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել թեմայի վերաբերյալ տեսական և մեթոդական գրականությունը,
- ուսումնասիրել տարրական դպրոցի և նախադպրոցականի չափորոշիչները, ծրագիրը և այլ մեթոդական գրքեր,
- մշակել և փորձարկել նախաայբբենական շրջանում կրտսեր դպրոցականների գրելու կարողության ձևավորմանը նպաստող վարժությունների համակարգ և ներկայացնել մեթոդական երաշխավորումներ:
- կատարել հետազոտություն աշակերտների շրջանում և վերլուծել արդյունքները:

Ժամանակակից կյանքը թելադրում է կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման նոր և արդյունավետ մեթոդների կիրառում և հոգեբանամանկավարժական ճիշտ մոտեցումներ: Առավելագույնս կարևորվում է երեխային դպրոցին նախապատրաստելու համակողմանի, բազմաբնույթ գործընթացը, որը ներառում է երեխայի կյանքի բոլոր ոլորտները:

ԳԼՈՒԽ 1.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու զարգացումն անխզելիորեն կապված է նրա տարիքի հետ։ Յուրաքանչյուր տարիք ունի իրեն բնորոշ ֆիզիկական, բնախոսական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները։ Դեռևս վաղնջական ժամանակներից մարդիկ գիտակցել են այդ՝ ելնելով իրենց մանկավարժական փորձից և աճող սերնդի կրթության, դաստիարակության հիմնախնդիրները լուծելիս անհրաժեշտ են համարել դասակարգել մարդու կյանքը ըստ փուլերի։ Այդպիսի բազմաթիվ դասակարգումներ են արվել մանկավարժապատմագիտության զարգացման տարբեր շրջաններում՝ սկսած հին աշխարհի փիլիսոփաներից մինչև մեր օրերը։ Այժմ մանկավարժությունը, հոգեբանությունը տարիքային շրջաբաժանում կատարելիս հիմնվում է երեխաների տարիքային առանձնահատկությունների վրա։ Այդ շրջաբաժանումը շատ պայմանական է, քանի որ երեխաներն էլ իրենց անհատական զարգացմամբ դրսևորում են զգալի տարբերություններ։ Տարիքային առանձնահատկությունները տվյալ շրջանին բնորոշ բնախոսական-կազմախոսական և հոգեբանական զարգացման յուրահատկություններ են։

1.1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթադաստիարակչական գործընթացներում երեխաների զարգացման տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների ախտորոշումը և հաշվի առնելը, որպես շատ կարևոր դաստիարակության սկզբունք, ակնհայտ է և հիմնավորվել է շատ ականավոր մանկավարժագետների ու հոգեբանների կողմից։

Գր. Տաթևացին «Սահմանադրություն դաստիարակության» աշխատության մեջ գրում է. «Ուսուցման դաստիարակության մեջ պետք է հաշվի առնել երեխաների ոչ միայն տարիքային, այլև անհատական առանձնահատկությունները, մտավոր կարողությունները, բազմակողմանիորեն ուսումնասիրել նրանց կյանքը, ապրումները, ձգտումները, հակումները, միայն այդ ձևով է կարելի ձևավորել

մանկան միտքն ու հոգին: Այս հարցում ամեն մի սխալ ճակատագրական կարող է լինել, քանի որ դաստիարակը կարող է սպանել կամ կենդանություն տալ մարդուն»,- ընդհանրացնում է Տաթևացին[1]:

Դպրոցում մանկավարժները հանապազօրյա կրթադաստիարակչական խնդիրներ լուծելիս պետք է լավ ուսումնասիրեն տարբեր տարիքի դպրոցականների բնախոսական և հոգեբանական զարգացման առանձնահատկությունները:

Կրտսեր դպրոցական հասակը երեխայի կյանքում շրջադարձային փուլ է, քանի որ նրա կյանքում առաջատար գործունեություն է դառնում ուսումը: Դպրոցական տարիքում խաղը չի անհետանում, այլ կերպափոխվում է իրականությանը համապատասխան: Դանդաղ, բայց անշեղորեն վաղ կրտսեր դպրոցական տարիքի երեխան մտնում է իր նոր դերի՝ ուսումնառուի կարգավիճակի մեջ: Դրան նպաստում են առաջին հերթին դպրոց գնալու և դպրոցական առօրյայի մեջ ձուլվելու հանգամանքը: Երեխան պետք է դպրոց գնա վեց տարեկանից, որն զգալի դժվարություն է ստեղծում այն երեխաների համար, որոնք, ըստ իրենց նյարդային գործունեության տեսակի և մտավոր զարգացման մակարդակի, ավելի դանդաղ են մտածում, ուշ են հասկանում բացատրությունը: Ուսուցիչը պետք է հետևի երեխաների բնախոսական զարգացմանը, հենաշարժողական օրգանների աճին, կարողանա նրանց զարգացման շեղումները կանխել ժամանակին: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը /պլանավորում, զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/ [2]:

Կրտսեր դպրոցական տարիքը բնորոշվում է երեխայի կյանքում կարևոր փոփոխությունով: Նրա մոտ արդեն բավականին զարգացած են ռեֆլեքսային ունակությունները: Այս տարիքում անձնավորության զարգացման ձեռքբերում է համարվում «Ես պարտավոր եմ» մոտիվի գերիշխումը «Ես ուզում եմ» մոտիվի նկատմամբ[3]:

Միայն սեփական գործունեության արդյունքում է երեխան իր համար բացահայտում հաղորդակցման ձևերի հնարավոր բոլոր տարբերակները[4]:

---

1. https://www.youtube.com/watch?v=1BVNL5euG-I&t=11s

2.Բալյան Ա.Ա Մանկավարժական հոգեբանության հարցեր - Երևան: Լույս, 1983թ.

3.ԿրուտեցկիՎ.Ա., Մանկավարժականհոգեբանությանհիմունքներ, 1976թ., էջ 247:

4.Տե՛ս նույնը, էջ 253:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրոնանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողունակություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը, որն առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը:

Կրտսեր դպրոցականը իր նոր գործունեության մեջ է ներառում ուսումը, որի արդյունքները գնահատվում են մեծահասակների կողմից[5]: Երբ երեխան լավ է սովորում, նրան գովում են և՛ ծնողները, և՛ ուսուցիչը: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի դերը ոչ միայն որոշիչ , այլև միակ հեղինակություն վայելող կարծիքն է, որի հետ բոլորը հաշվի են նստում, բարձր գնահատականը ապահովում է համապատասխան կարգավիճակ[6]:

1.2.ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄՆ ՈՒ ԴՐԱ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վեց տարեկանում բուռն զարգացում են ապրում երեխաների ճանաչողական հետաքրքրությունները, մասնավորապես՝ ուսումնական հետաքրքրությունները, ակտիվանում է սովորելու ցանկությունը, որի բնականոն զարգացման համար

5.Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր - Երևան: Լույս, 1983թ.

6.Шаповаленко И. В., “Возрастная психология (Психология развития и возрастная психология)” Москва 2005, 350 ст.,

անհրաժեշտ են որոշակի պայմաններ, հակառակ դեպքում՝ աստիճանաբար կմարի ոչ միայն երեխաների սովորելու ցանկությունը, այլև լուրջ վնաս կհասցվի նրանց մտավոր, ֆիզիկական հոգեկան զարգացման գործընթացին և առողջությանը։

Տարիների ուսունասիրությունները ցույց են տվել, որ 5-6 տարեկան երեխան ապրում է տարիքային ճգնաժամ. հակառակ իրենց կամքի, հայտնվելով ուսումնական գործընթացի կենտրոնում, պարտավոր են ծրագրով նախատեսված նյութը յուրացնել որոշակի ժամանակահատվածում։ Վեց տարեկանի ճգնաժամի փուլում ի հայտ է գալիս այն, ինչը Լև Վիգոտսկին անվանում է ապրումների ընդհանրացում։ Հաջողությունների կամ անհաջողությունների շղթան, որոնք ամեն անգամ ապրում է երեխան նման ձևով, հանգեցնում է կայուն աֆեկտիվ կոմպլեքսի ձևավորմանը. թերարժեքության զգացում, վիրավորված ինքնասիրություն կամ սեփական նշանակալիության, կոմպետենտության, բացառիկության զգացում։ Իհարկե, հետագայում աֆեկտիվ ապրումները կարող են փոխվել, նույնիսկ վերանալ այլ տեսակի փորձի կուտակմանը զուգահեռ։ Բայց նրանցից մի քանիսը, ամրապնդվելով համապատասխան իրադարձություններով և գնահատականներով, կֆիքսվեն անձի կառուցվածքում՝ ազդելով երեխայի ինքնագնահատականի, նրա հավակնությունների զարգացմանը։ Ապրումների ընդհանրացման շնորհիվ՝ վեց տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տրամաբանությունը։ Ապրումները ձեռք են բերում նոր իմաստ երեխայի համար, նրանց մինչև հաստատվում են կապեր, հնարավոր է դառնում ապրումների պայքարը[7]։

Երեխայի արտաքին և ներքին աշխարհների տարբերակումը կապված է նրա վարքի կառուցվածքային փոփոխության հետ։ Ի հայտ է գալիս արարքի իմաստային հիմքը ինչ-որ բան անելու ցանկության և զարգացող գործողությունների միջև։ Այս մեխանիզմի շնորհիվ վերանում է մանկական անմիջականությունը. երեխան մտածում է գործելուց առաջ, սկսում է թաքցնել իր ապրումները, տատանումները, փորձում է ուրիշներին ցույց չտալ, որ ինքը լավ չէ։ Երեխաների արտաքին և ներքին աշխարհների տարբերակման ճգնաժամային դրսևորումներ են դառնում ծամածռությունները, վարքի արհեստական ձգվածությունը, անբնականությունը։

7.Ալավերդյան Ա. Հ., Անձի դաստիարակության և ձևավորման գործընթացում զարգացման ճգնաժամերի դերն ու դրանց մասին պատկերացումների զարգացումը, «Մանկավարժական միտք», 2014թ., 3-4, Զանգակ հր., [էջ 289-292]։

ԳԼՈՒԽ 2.

ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պատրաստ լինելը մարդու մտավոր զարգացման որոշակի մակարդակ է: Ոչ թե ինչ-որ հմտությունների և կարողունակությունների շարք, այլ ամբողջական և բավականին բարդ կրթություն: Կյանքի յուրաքանչյուր նոր փուլ երեխայից պահանջում է որոշակի պատրաստակամություն: Եթե երեխան, զարգացման խնդիրների պատճառով, պատրաստ չէ այլ երեխաների հետ ընդլայնված հարաբերությունների մեջ մտնել, նա չի կարողանա մասնակցել դերային խաղին, և որպեսզի երեխան նախադպրոցականից վերածվի դպրոցականի, նա պետք է փոխվի որակապես, պետք է զարգացնի մտավոր մի շարք գործառույթներ:

<u>ա/ Դպրոցական կրթության ֆիզիկական պատրաստվածություն:</u> Ֆիզիկական զարգացում+առողջական վիճակ+կենսաբանական տարիք = մորֆոլոգիական պատրաստվածություն. սա որոշում են բժիշկները՝ դպրոցի դիմաց լրացնելով բժշկական քարտ: Հաճախ դա տեղի է ունենում ֆորմալ, քարտի վրա մուտքագրվում է անհրաժեշտ տեղեկատվությունը՝ քաշը, հասակը և այլ ցուցանիշներ: Այնուհետև նեղ մասնագետներն իրենց գնահատականներն են դնում և վերջ: Ուշադրություն դարձնելով նյարդային համակարգի զարգացման մակարդակին՝ պետք է խորհրդակցել բժշկի հետ, թե ինչպես է դա դրսևորվում երեխայի վարքագծի մեջ՝ երեխային ավելի լավ հասկանալու համար:

<u>բ/Դպրոցական կրթության հոգեբանական պատրաստվածություն:</u> Հոգեբանական պատրաստվածությունը հաջորդ կարևոր բաղադրիչն է: Առօրյա վարքի և մեծահասակների հետ շփման պայմաններում, ինչպես նաև դերախաղի պրակտիկայում, այս տարիքի երեխան զարգացնում է սոցիալական շատ նորմերի ընդհանրացված գիտելիքներ, բայց այդ գիտելիքը դեռևս լիովին անգիտակից է երեխայի կողմից և ուղղակիորեն զոդված է նրան:

Առաջին էթիկական ատյանները դեռևս համեմատաբար պարզ համակարգային կարգավորումներ են, որոնք բարոյական զգացմունքների սաղմերն են և որոնց

հիման վրա էլ ապագայում ձևավորվում են արդեն իսկ բավականին հասուն բարոյական և հոգեբանական զգացումներ և համոզմունքներ:

<u>ա/ Դպրոցական կրթության ինտելեկտուալ պատրաստվածություն:</u> Այս բաղադրիչը ենթադրում է, որ դպրոց հաճախող երեխան ունի հորիզոն, կոնկրետ գիտելիքների պաշար, համակարգված և մասնատված ընկալում, ուսումնասիրվող նյութի նկատմամբ տեսական վերաբերմունքի տարրեր, ընդհանրացված մտածողության ձևեր, տրամաբանական գործողություններ: Սակայն, հիմնականում երեխայի մտածողությունը մնում է փոխաբերական՝ հիմնված առարկաների, դրանց փոխարինողների հետ իրական գործողությունների վրա:

2.2. ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Վեց տարեկանների հաղորդակցական հմտությունները՝ որպես սոցիալական ադապտացիայի միջոց, համարվում են այս տարիքի երեխայի հոգեբանական առանձնահատկությունները: Այս տարիքը սոցիալական վարքի ուսուցման հարմարավետ շրջանն է. տարբեր սեռի երեխաների միջև շփման մշակույթը, հաղորդակցման և խոսքային կարողությունների ձևավորումը և սոցիալական իրավիճակների տարբերման միջոցը: Երեխան, դպրոց հաճախելով, առաջին հերթին իր համար բացում է նոր վայր սոցիալական տարածության մեջ. նրա առջև դրվում են պարտականություններ՝ կապված ուսուցման գործունեության հետ: Բավարար պայմանների և երեխայի մտավոր զարգացման հիման վրա տեսական գիտակցության և մտածողության զարգացման համար ստեղծվում են բավարար նախադրյալներ[8]:

Դպրոցը երեխայի առջև դնում է պարտականություններ՝ կապված խոսքի զարգացման հետ: Դաս պատասխանելիս խոսքը պետք է լինի գրագետ, հակիրճ, արտահայտիչ և գեղեցիկ, շփման ժամանակ խոսքի կառուցումը պետք է համապատասխանի հաղորդակցական հմտություններին:

Կրտսեր դպրոցականների զարգացման մեջ կարևորվում է, այսպես կոչված, «սոցիալական խոսքի» զարգացումը, որտեղ փորձ է կատարվում մեկ այլ մարդու հաղորդել ինչ-որ բան: Երեխաների խոսակցությունները դիտելով և լսելով՝ Ժ. Պիաժեն բացահայտել է, որ սոցիալական խոսքը հակառակ է առօրյա խոսակցականին: Գիտնականը այն խոսքը, որի դեպքում մարդը խոսում է ինքն իրեն

[8]Эльконин, Д.Б. Психология обучения младшего школьника / Д.Б. Эльконин. – М.,[էջ 34]

այլ մարդկանց ներկայությամբ, անվանել է կոլեկտիվ մենախոսություն[9]: Լ. Ս. Վիգոտսկին համարում էր, որ ինքնուրույն խոսքը ուղղորդում է երեխայի մտածողության զարգացմանը և գործունեությանը՝ օգնելով երեխային կատարել առաջադրանքը[10]: Նա ապացուցել է, որ ինքնուրույն խոսքը չի անհետանում, այլ «միանում է մտքի հետ»՝ վերածվելով արտաքին խոսքի: Երբ մտածողությունը և խոսքը ամբողջությամբ միավորվում են, նա կարող է գործածել անձայն արտաքին խոսքը: Դա կատարվում է այն դեպքերում, երբ երեխան որոշում է իր վարքի դրսևորման սոցիալական խնդիրները: Հետևաբար, երեխայի հաղորդակցական կարողությունների ձևավորումը տեղի է ունենում լեզվի միջոցների ակտիվացման շնորհիվ: Լեզվի միջոցով իր միտքը ազատ արտահայտելու կարողության դեպքում օգտագործվում են նախադասության տարբեր ձևեր: Տարրական դպրոցում երեխան ընդունում է նոր պայմաններ, որոնք առաջադրված են ուսուցչի կողմից և աշակերտներն այս դեպքում փորձում են լավ կատարել պահանջները և հետևել կանոններին: Ուսուցիչը երեխայի համար դառնում է կերպար, որն ընդգծում է երեխայի հոգեբանական վիճակը ոչ միայն դասարանում դասերի ժամին, այլև համադասարանցիների հետ շփման ժամանակ, ինչպես նաև ընտանիքում[11]:

2.3. ԽԱՂԸ ԵՎ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն իրենց ուրույն տեղն ունեն սովորողների իմացական կարողությունների զարգացման գործում, բայց խաղը մնում է անփոխարինելի: Խաղը մարդուն ուղեկցել է նրա պատմական զարգացման բոլոր փուլերում: Այն եղել է ոչ միայն որպես զվարճալի զբաղմունք, այլև կյանքի տարբեր հարաբերություններում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, քննադատական մտքի ձևավորման միջոց:

Մեծ մանկավարժ Կ.Դ. Ուշինսկու այն խոսքերը, թե. «Եթե մանկավարժությունն ուզում է մարդուն դաստիարակել բոլոր հարաբերություններում, ապա նա պետք է մարդուն ճանաչի բոլոր հարաբերություններում»[12] այսօր նույնպես արդիական է:

Վեց տարեկան երեխային բոլոր կողմերով ճանաչելու համար բավական է նրան

[9]Пиаже, Ж. Речь и мышление ребёнка / Ж. Пиаже. – М., 1994. [էջ 65]:

[10]8.Давыдов, В.В. Проблемы развивающего обучения / В.В. Давыдов. – М. : Педагогика, 1986.,[էջ 89]

[11]Мухина, В.С. Возрастная психология / В.С. Мухина. – М. : Академия, 2002.[էջ 45]

[12]К.Д.Ушинский, Педагогика,М.,2019,стр.80,

ուսումնասիրել խաղային գործունեության ժամանակ։

Խաղերի բազմազանությունը տարբեր բնույթի արգելքներ է ստեղծում նպատակին հասնելու՝ հաղթելու ճանապարհին։ Այդ արգելքները հաղթահարելու ժամանակ յուրաքանչյուր երեխա դրսևորում է ինքնատիպ վարք՝ ուժ, ճարպկություն, խարդախություն, հնարամտություն, խելք, քննադատում և այն։ Հենց այդ արգելքների հաղթահարման գործընթացն էլ նպաստում է երեխաների ըմբռնողականության, ուշադրության, կամքի, դիտողականության, մտածողության, երևակայության զարգացմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, այդ ուղղությամբ արժեքավոր ունակությունների և կարողունակությունների ձևավորմանը։

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դպրոց ընդունվող ոչ բոլոր երեխաներն են տիրապետում ուսումնական գործունեություն ծավալելու համար չափազանց կարևոր այն ունակություններին, որոնք, բնականաբար, պիտի ձևավորվեն ու զարգանան դպրոցում դասավանդվող առարկաների դասերի ընթացքում՝ ստեղծելով անձի բազմակողմանի զարգացման հնարավորություններ։

Ընդգծելով մանկավարժական գործընթացում խաղերի օգտագործման կարևորությունը՝ Պ.Ֆ.Կապտերևը գրում է.«Տարբեր պատճառներով զարգացման մակարդակով իրենց տարեկիցներից հետ մնացող երեխաները դպրոցում առանց խաղի, փոխանակ զարգանան, կսկսեն հիմարանալ, գորշ, անբովանդակ, անիմաստ կյանք վարել, ժամանակը անցկացնել ապարդյուն։ Եթե ուսուցիչն այնքան խելամիտ լինի, որ գիտելիքները կապի խաղերի հետ, կարողանա այդպիսի երեխաներին ակտիվ մարմնական գործունեություն ներկայացնող խաղային գործունեությունից հմտորեն տանել դեպի ուսումնական խաղաղ, կլանված, համեմատաբար նստակյաց գործունեություն, ապա նա ձեռք կբերի այսպիսի երեխաների ընդունակությունները բացելու բանալին, կկարողանա կառավարել նրանց զարգացումը և ցուցաբերել էականորեն կարևոր, անգնահատելի ծառայություններ նրանց ողջ հետագա կյանքում»[13]։

[13]П.Ф.Каптерев, Дидактическиеочерки, Петроград, 1915г., стр .350

ԳԼՈՒԽ 3.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ /ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ/

Երեխաների՝ ուսումնական գործունեությանը պատրաստ լինելու մակարդակը բացահայտելու համար կատարել ենք մի շարք հետազոտություններ, անցկացրել ենք հարցումներ ծնողների և ուսուցիչների շրջանում, բացահայտել երեխաների պատրաստվածության հմտությունների ու կարողությունների մակարդակը՝ առաջադրանքների, խաղերի և այլնի միջոցով։

Երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին՝ գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար։

Նախ ուսումնասիրել ենք աշակերտների անձնական գործերը, զրուցել ծնողների հետ, հանգամանորեն հետաքրքրվել նրանց առողջական տվյալներով, ակնառու, ընդգծված առանձնահատկություններով։ Հետազոտությունն անցկացրել ենք Կոտայքի մարզի Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան №3 հիմնական դպրոցի հիսուն վեց տարեկանների շրջանում։ Ծանոթությունն իրականացրել ենք նախապես մշակված հարցերի շուրջ՝ կազմակերպվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների կատարման ճանապարհով։

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք յուրաքանչյուր աշակերտի.

1. *Խոսելու, բացատրվելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցիչներին լսելու, հասկանալու, ուսուցչի հանձնարարությունները կատարելու, ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը։*
2. *Հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը.*
   - բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ,
   - հնչյուններն արտասանում է ճիշտ, մաքուր, անխառն կամ որոշակի սխալներով (ունի լեզվական արատ),
   - ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն խոսք,
   - ունի արտահայտիչ խոսք։
3. *Բանավոր կապակցված խոսք.*

- ունի իր տարիքին համապատասխան բառապաշար և կարողանում է տրամաբանված, պատճառահետևանքային կապերի ճիշտ մեկնաբանմամբ դատողական և գնահատող խոսք կառուցել,
- անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ,
- գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները (ինքնուրույն կամ հարցերի օգնությամբ), հիշում է դրանց հերոսներին, գործողությունները, վարքը, կարծիքներ է հայտնում նրանց մասին և հիմնավորում է դրանք:

4. *Պատկերացումները շրջապատող բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ:*
5. *Տարածության մեջ կողմնորոշվելու հմտությունների առկայությունը:*
6. *Մի շարք անվտանգության կանոններին տիրապետելը:*
7. *Ծնողների և ընտանիքի անդամների մասին ունեցած գիտելիքները և այլն:*

Կատարված հետազոտության վերջում գրանցեցինք հետևյալ արդյունքները.



Գծապատկերից կարող ենք եզրակացնել, որ որոշ սովորողներ, այնուամենայնիվ, դեռ պատրաստ չեն ուսումնական գործունեություն ծավալել:

ԳԼՈՒԽ 4.

ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

4.1.ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Տարրական դպրոցի ուսուցիչը պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակականության ապահովման համար: Պատահական չէ, որ մեր հասարակությունը տարրական դպրոցի ուսուցչին է վստահում իր համար ամենաթանկը՝ մեր փոքրիկ քաղաքացիներին և մեր երկրի ապագան, ինչպիսին մանկավարժի աշխատանքի արդյունքն է, այդպիսին էլ կլինի մեր հասարակության վաղվա օրը: Աներկբա է, որ տարրական դպրոցի ուսուցիչն աշակերտի համար հեղինակություն է, իսկ նրա խոսքը՝ օրենք: Սա էլ ավելի է բարձրացնում ուսուցչի պատասխանատվությունը սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպան հարցում: «ՀՀ հանրակրթության մասին օրենքը» սահմանում է ընդհանրական պահանջներ, որոնք վերաբերում են բոլոր ուսուցիչներին: Սակայն տարրական դասարանների ուսուցչին ներկայացվող պահանջներն ինքնատիպ են և ունեն նաև այլ բնութագրիչներ: Դրանք հիմնականում պայմանավորված են երեխայի բարձրարժեքությամբ, նրա տարիքային առանձնահատկություններով, տարրական կրթության արդիական խնդիրներով և բովանդակությամբ, հասարակական միջավայրին ինտեգրվելու պահանջով, նորագոյացություններով, ճգնաժամային փուլի խնդիրներով և մանկավարժի մասնագիտական կոմպետենտությամբ: Վերջինս

ոչ թե պիտի հանդես գա որպես գիտելիքներ փոխանցողի, այլ երեխային աջակցողի, գիտելիքների ձեռքբերման գործընթացում ուղեկցողի դերում: Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ:

Գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են սովորողի տարիքային առանձնահատկություններով ու հնարավորություններով պայմանավորված որոշակի պահանջներ: Գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պիտի հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդականության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիդակտիկական, այնպես էլ շարժուն խաղեր:

Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով.

- *նախաայբբենական շրջան,*
- *աբբենական կամ գրուսուցման շրջան,*
- *հետայբբենական շրջան:*

Պայմանավորված յուրաքանչյուր երկրի կրթական համակարգի առանձնահատկություններով և հայեցի կրթության իրականացման շահեկան դիրքորոշումներով, ինչպես նաև ուսումնական գործունեությունն սկսելու տարիքով՝ գրաճանաչության նախաայբբենական շրջանին տրամադրվում է տարբեր ժամանակահատված՝ փուլ առ փուլ իրականացնելով վերը նշված խնդիրները:

4.2.ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Նախաայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է: Այբբենարանում ներկայացված թեմատիկ նկարները, նկար-պատմությունները, նախադասության և բառի ընդհանրացված գծապատկերները, բառի վանկային ու հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման,

լեզվական վերլուծությունների ու համադրությունների, կարդալու կարողության ձևավորման հիմքերն են։

Նախաայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական, տրամաբանական-վերլուծական մտածողության և ուսումնական հմտությունների զարգացումը, բառապաշարի հարստացումը։ Նախաայբբենական փուլի նպատակներին հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է։ Այս նպատակադրումը պահանջում է ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալ ուղղախոսական և ուղղագրական կանոնների ճիշտ կիրառմանը, բառիմաստի ընկալմանը, բառօգտագործմանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի ու բառաձևերի դերին։ Սա նպաստելու է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը, իմացական դաշտի ընդլայնմանը։

Այս բոլոր առումներով հաջողության հասնելու համար հատուկ և նպատակաուղղված քայլեր եմ կատարել և մեթոդական մոտեցում ցուցաբերել՝ սկսած նախաայբբենական փուլից։

Դասավանդման ընթացքում մեծ ուշադրություն եմ դարձրել դասի պլանավորմանը, որը ուղղորդող նշանակություն ունի։ Դասավանդելիս հաճախակի կիրառել եմ համագործակցային մեթոդներ՝ չհրաժարվելով ավանդականից։ Այդ մեթոդների նպատակային կիրառումն աշակերտների համար դասերը դարձնում է հետաքրքիր և նպաստում նյութի հեշտ յուրացմանը։

Նախաայբբենական բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրասիրություն, սեր գրքի և դպրոցի նկատմամբ, սովորելու ցանկություն։ Հաճույքով կատարելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքները՝ երեխաներն ուժեղ են զգում իրենց, դառնում են զվարթ, շփվող և նրանց չի լքում հաջողակ լինելու զգացումը։ Նախագրքային բաժնի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքների կատարմանը նախապատրաստելը, միաժամանակ, նրանց մտածողության զարգացումը, ստեղծագործական

ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը: Նախաայբբենական փուլը կազմակերպելիս նպատակային առաջին գործողությունը երեխաների ուշադրության կենտրոնացմանը միտված վարժությունների կազմակերպումն է: Երեխաներին առաջադրում եմ նախ հեշտ վարժություններ, ապա աստիճանաբար ավելի բարդ տարբերակներ:

Մեր անցկացրած փորձը ցույց է տվել, որ հատկապես կրտսեր տարիքի երեխաներին հետաքրքրում են բազմաբնույթ լեզվատրամաբանական ուսուցողական առաջադրանքները: Դրանց շնորհիվ նրանք առավել հեշտ են յուրացնում ուսուցանող նյութը և ավելի են կապվում գրքին: Այդ կերպ նրանք սովորում են սովորել և դրանից հաճույք ստանալ, սովորում են մտածել, ինքնուրույն վճիռներ կայացնել, գնահատել իրենց կատարածը, համեմատել ուրիշների հետ, մրցել: Զարգանում են նրանց ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, նրանց մեջ ձևավորվում են երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակությունները:

Կան բազմաթիվ խաղ-առաջադրանքներ, որոնք լուծում են վերոնշյալ խնդիրները:

Օրինակ՝ Գտի'ր ավելորդը: Երեխան պետք է լարի ուշադրությունը և հասկանա, թե նկարում ո՞ր պատկերն է ավելորդ:

- Գտի'ր զույգը: Ուշադրության կենտրոնացմանն ուղղված ամենահեշտ վարժություններից է: Երեխային առաջարկում ենք տարբեր պատկերներ, որոնցից նա պետք է գտնի չափով, ձևով, գույնով նման պատկերներ:



- Գտի՛ր սխալը: Տրված են արտասավոր ու անհեթեթ նկարներ: Այդ անհամապատասխանությունը նկատելու համար երեխայից պահանջվում են ճանաչողական գիտելիքներ և դիտունակություն:

- Ո՞ր նկարներն են սկսվում նույն հնչյունով: Սովորողները նախ հնչյունային վերլուծության են ենթարկում նկար-բառերը, ապա նշում միևնույն հնչյունով սկսվող նկար-բառերը:

- Ո՞ր դրվագն է առանձնացված: Սովորողները պատմություն են հորինում թեմատիկ նկարի շուրջ: Նրանք որոշում են, թե որ դրվագներից է բաղկացած նկար-պատմությունը, և նշում են այն դրվագը, որն առանձնացված է տրված նկար-պատմությունից: Առաջադրանքը զարգացնում է երեխաների՝ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդի ժամանակաշրջանում դաստիարակության և կրթության կազմակերպման նկատմամբ կյանքի բարձր պահանջները ստիպում են մեզ փնտրել նոր, առավել արդյունավետ հոգեբանական և մանկավարժական մոտեցումներ՝ ուղղված ուսուցման մեթոդները կյանքի պահանջներին համապատասխանեցնելուն: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի վեց տարեկան երեխաների դպրոցի պատրաստվածության խնդիրը:

Հաշվի առնելով գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը, փորձնական դասերի վարումը, ուսուցիչների և երեխաների շրջանում իրականացրած հարցումները, մեր կատարած հետազոտությունները՝ եկանք այն եզրահանգմանը, որ.

- Դպրոց ընդունվող երեխան պետք է հասուն լինի ֆիզիոլոգիական և սոցիալական առումով, պետք է հասնի մտավոր և հուզական-կամային զարգացման որոշակի մակարդակ:
- Խաղը լավագույն միջոցն է պարզելու, թե երեխան որքանով է պատրաստ հաճախել դպրոց:
- Վեց տարեկանները ապրում են տարիքային ճգնաժամ, որի ժամանակ նրանց մեջ ընդգծված են դառնում հակասության ոգին, կամակորությունը, «Ես ինքս» դիրքորոշումը, ըմբոստությունը, անբավարարվածությունը:
- Վեց տարեկան երեխան հայտվում է ուսուցման ֆորմալիզացված համակարգի մեջ, որում բավարար չափով հաշվիչի առնվում նրա տարիքային առանձնահատկությունները:
- Վեցամյա երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է կարևորել ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կարողունակությունների ձևավորումը:
- Առաջնորդվելով ժամանակակից դպրոցի սովորողակենտրոն պահանջով՝ անհրաժեշտ է ավելի ճկուն դարձնել գրաճանաչության դասի կառուցվածքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի մտավոր, ֆիզիկական, հոգեբանական, տարիքային և այլ

առանձնահատկությունները, կազմակերպել տարբերակված ուսուցում:

- Նախնական գրաճանաչությունը ենթադրում է, որ մինչև դպրոց գնալը սանը պետք է.
  - Իմանա գրավոր խոսքի այբբենական բնույթի մասին.
  - Իմանա որոշ ուղղագրական հասկացություններ.
  - Կարողանա լսել, հասկանալ բանավոր խոսքը, հաղորդակցվել,
  - Վերարտադրել լսածը, սեփական կարծիք հայտնել:
  - ընկալել դեպքերի հաջորդականությունը, կանխատեսումներ անել, կապել պատմությունը սեփական կենսափորձին:
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունը լուրջ դերակատարում ունի նախադպրոցահասակ երեխային դպրոցական կյանքի նախապատրաստելու բարդ ու պատասխանատու ճանապարհին:

Ելնելով վերոնշյալ եզրակացություններից՝ **առաջարկում ենք.**

- Մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնք ՆՈՒՀ-երի և նախադպրոցական զարգացման այլ հաստատությունների նախապատրաստական խմբերի պարապմունքներում ուշադրության կենտրոնում կպահեն հետևյալ խնդիրները.
  - հանձնարարությունների ճիշտ ընկալում,
  - ունակությունների ու հետաքրքրությունների դրսևորում,
  - սեփական աշխատանքի ճշտությանը հետևելու կարողունակություն,
  - գործունեության մի ձևը մյուսով հաճախակի փոխարինում/կարդալ, գրել, լսել, նկարել, խաղ, ֆիզկուլտ-դադար/,
  - զննականություն, պատկերավորություն, բոլոր զգայարանների մասնակցություն:
- Իրականացնել աշակերտակենտրոն, անձնակողմնորոշված ուսուցում:
- Մեծ տեղ տալ ստեղծագործական աշխատանքին:
- Աշխատել առողջ դրդապատճառների ձևավորման ուղղությամբ, յուրաքանչյուրին գնահատել արժանավույն՝ միշտ կատարելով գնահատման մեկնաբանություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., «Խաղալով սովորենք», Երևան, «Զանգակ-97», 2009թ.:
2. Գյուլամիրյան Ջ., «Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում», Երևան, Լույս, 1986թ.:
3. Թադևոսյան Ե., «Խաղից անցում ուսումնական գործընթացին», Երևան, 2011թ.:
4. Թունյան Ջ. Ե., Երիցյան Լ. Մ., «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն», Երևան, 2013թ.:
5. Մ. Սիմոնյան, «Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության բարելավման միջոց», Երևան, 2004թ.:
6. Ն. Բարսեղյան, «Խաղերը ուսուցման արդյունավետ միջոց», Երևան, 2001թ.:
7. Պետրովսկի Ա. Վ., «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», Երևան, 1977թ.:
8. Սարգսյան Ա., «Երեխայի հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը», Երևան, 1998թ.:
9. Венгер А. Л., “Психологическое готовность детей к обучению в школе”, /Развитиемышления и умственное воспитание дошкольника/, М.,1985г.
10. Зак А. З.,“Развитие теоретического мышления у младших школьников”,М,1984 г.
11. Изард К. Э, “Психология эмоций”. СПб, Питер, 2006г.,
12. Калмыкова З. И., “Продуктивное мышление как основа обучаемости”, М.,1981 г.
13. Козлова С. “Теория и методика ознакомления дошкольников с социальной действительностью”, Москва, “Академия”, 2004 г.
14. Липкина А.И., “Самооценка школьника ”, М, 1976 г.
15. https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299
16. https://www.armparents.com
17. https://www.irtek.am/views/act.aspx?aid=25829
18. https://iverh.com/
19. http://www.openclass.ru/dig-resource/57245
20. http://zangak.am/pdf/Mankavarjakan-mitq-2014(3-4).pdf